

ՀԱՍՏԱՏՎԱԾ Է՝  
«ԱՐՑԱԽ ՀԵԿ» բաց բաժնետիրական ընկերության  
տնօրենների խորհրդի 2010 թվականի  
օգոստոսի 20-ի թիվ N 1-2010/05 որոշմամբ

## ԿԱՆՈՆԱԿԱՐԳ

ՆԵՐՔԻՆ (ԻՆՍԱՅԴԵՐԱԿԱՆ) ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ



**«ԱՐՑԱԽ ՀԵԿ» ԲԱՑ ԲԱԺՆԵՏԻՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ**

Ստեղծանակերտ 2009թ.

## ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Հոդված 1. Ընդհանուր դրույթներ	3
Հոդված 2. Հիմնական հասկացություններ	3
Հոդված 3. Ներքին (ինսայդերական) տեղեկությունների կազմը	4
Հոդված 4. Ներքին (ինսայդերական) տեղեկություններ տիրապետող անձի հիմնական պարտականությունները	6
Հոդված 5. Ինսայդերների կողմից Ընկերության արժեթղթերով (բաժնետոմսերով) կատարված գործարքների մասին տեղեկությունների բացահայտումը	7
Հոդված 6. Ներքին (ինսայդերական) տեղեկությունների բացահայտման Ընկերության պարտականությունները	8
Հոդված 7. Ներքին (ինսայդերական) տեղեկությունների գաղտնիության պահպաման պարտականությունները	8
Հոդված 8. Ներքին (ինսայդերական) տեղեկությունների պաշտպանությանն ուղղված միջոցառումներ	9
Հոդված 9. Ներքին (ինսայդերական) տեղեկությունների օգտագործման կարգը	10

## Հոդված 1. Ընդհանուր դրույթներ

- 1.1. Սույն կանոնակարգը մշակված է «Արժեթղթերի շուկայի մասին» ՀՀ օրենքի, «Բաժնետիրական ընկերությունների մասին» ԼՂ օրենքի և «Արցախ ՀԷԿ» բաց բաժնետիրական ընկերության (այսուհետ՝ «Ընկերություն») կանոնադրության պահանջներին համապատասխան և սահմանում է՝  
ա) Ընկերության, նրա կողմից թողարկված արժեթղթերի (բաժնետոմսերի) և դրանցով կատարված գործարքների մասին այնպիսի տեղեկությունների օգտագործման կարգը, որոնք չեն հանդիսանում հանրանատչելի տեղեկություններ և դրանց բացահայտումը կարող է ազդել Ընկերության կողմից թողարկված արժեթղթերի (բաժնետոմսերի) շուկայական գնի վրա,  
բ) ներքին (ինսայդերական) տեղեկությունների օգտագործմամբ արժեթղթերով (բաժնետոմսերով) գործարքների կատարման կարգը,  
գ) ներքին (ինսայդերական) տեղեկությունների և ինսայդերների կողմից արժեթղթերով (բաժնետոմսերով) կատարված գործարքների վերաբերյալ տեղեկությունների բացահայտման կարգը:
- 1.2. Սույն կանոնակարգը նախատեսում է ապահովել.  
ա) սահմանված կարգով Ընկերության կողմից թողարկված (բաժնետոմսերի) շուկայական գնագոյացումը,  
բ) Ընկերության կողմից թողարկված արժեթղթերով (բաժնետոմսերով) գործարքների կատարման ժամանակ Ընկերության բաժնետերերի և այլ անձանց իրավունքների և օրինական շահերի պաշտպանությունը,  
գ) ինսայդերների գործունեության նկատմամբ արդյունավետ վերահսկողությունը,  
դ) Ընկերության կողմից թողարկված արժեթղթերով (բաժնետոմսերով) գնային չարաշահումների կանխարգելումը:

## Հոդված 2. Հիմնական հասկացություններ

- 2.1. Սույն կանոնակարգում օգտագործվող հասկացություններն օգտագործվում են հետևյալ նշանակությամբ.

**«Ներքին (ինսայդերական) տեղեկություններ».** ցանկացած չիրապարակված տեղեկություն, որն ուղակիորեն կամ անուղղակիորեն վերաբերում է Ընկերությանը, նրա կողմից թողարկված արժեթղթերին (բաժնետոմսերին) կամ դրանցով կատարված գործարքներին, և որի հրապարակումը կարող է եական ազդեցություն ունենալ նշված արժեթղթերի (բաժնետոմսերի) գների վրա,

**«Ինսայդեր».** անձ, որն Ընկերության կապիտալում իր մասնակցության, կառավարման որևէ մարմնում իր անդամության, պաշտոնի կամ այլ պարտականությունների կատարման կամ ծառայությունների մատուցման կապակցությամբ տիրապետում է ներքին (ինսայդերական) տեղեկությունների: Ինսայդեր են համարվում՝

- տնօրենների խորհրդի անդամները, գլխավոր տնօրենը, վերստուգող հանձնաժողովի անդամները,
- անձինք, որոնք Ընկերության համար աշխատանքային և/կամ քաղաքացիական պայմանագրերի հիման վրա կատարում են

աշխատանքային կամ այլ մասնագիտական պարտականություններ, որոնց հիմքով հնարավորություն ունեն տիրապետել ներքին (ինսայդերական) տեղեկատվությունների,

- Ընկերության առլիս իրականանող անձը (առլիստորը),
- Ընկերության անվանական արժեթղթերի սեփականատերերի ռեեստրը վարող անձը,
- Ընկերության գնահատողը,
- անձինք, որոնք իրավաբանական անձ ինսայդերի նկատմամբ իրենց պաշտոնական դիրքի և այլ հիմքով հնարավորություն ունեն տիրապետել ներքին (ինսայդերական) տեղեկատվություններին,

**«Ներքին (ինսայդերական) տեղեկություններ տիրապետող անձ».** անձինք, որոնք ուղղակիորեն կամ անուղղակիորեն փաստացի տիրապետում են ներքին (ինսայդերական) տեղեկությունների,

**«Ընկերության արժեթղթերով գնային չարաշահումներ».** Ընկերության կողմից թողարկված արժեթղթերի (բաժնետոմսերի) գների և(կամ) շուկայի ակտիվության բարձրացման կամ նվազման թվայցալ պատկեր ստեղծելու նպատակով ձեռնարկվող գործողություններ, որոնք ուղղված են ներդրողներին Ընկերության կողմից թողարկված արժեթղթերի (բաժնետոմսերի) գնման կամ վաճառքի դրդելուն, մասնավորապես՝

- այնպիսի տեղեկությունների տարածումը, որոնք սխալ կամ ապակողմնորոշիչ ազդակներ են հաղորդում շուկայի մասնակիցներին Ընկերության կողմից թողարկված արժեթղթերի (բաժնետոմսերի) գների վերաբերյալ, այդ թվում՝ տվյալ արժեթղթի (բաժնետոմսերի) մասին խեղաթյուրված տեղեկությունների տարածումը, եթե այդ տեղեկությունները տարածող անձը գիտեր կամ բավարար ուշադրություն ցուցաբերելու դեպքում կարող էր հմանալ դրանց՝ իրականությանը չհամապատասխանելու փաստի մասին,
- այնպիսի գործարքների կնքումը կամ դրանց կնքման պատվեր տալը, որը հանգեցնում է կամ կարող է հանգեցնել շուկայում Ընկերության կողմից թողարկված արժեթղթի (բաժնետոմսերի) գնի, դրա նկատմամբ պահանջարկի կամ առաջարկի ծավալի վերաբերյալ սխալ կամ ապակողմնորոշիչ պատկերի ստեղծմանը կամ ազդակների հաղորդմանը, բացառությամբ <<օրենսդրությամբ սահմանված դեպքերի,
- այնպիսի գործարքների կնքումը կամ դրանց կնքման պատվեր տալը, որը հանգեցնում է Ընկերության կողմից թողարկված արժեթղթի (բաժնետոմսերի) գնի ոչ օրինաչափ շեղումների կամ արժեթղթի (բաժնետոմսերի) գնի արհեստական մակարդակի սահմաննանը՝ բացառությամբ <<օրենսդրությամբ սահմանված դեպքերի,
- այնպիսի գործարքների կնքումը կամ դրանց կնքման պատվեր տալը, որն իրականացվում է կեղծ, անբարեխիղձ կամ թյուրիմացություն առաջացնող և(կամ) ապակողմնորոշիչ մեխանիզմների գործադրմամբ,
- նույնաբնույթ այլ գործողությունները:

**«Տեղեկությունների բացահայտման պահը».** ԼՂՀ օրենսդրությամբ և Ընկերության ներքին իրավական ակտերով նախատեսված բացահայտման ենթակա տեղեկությունների իրապարակման պահը:

**Հոդված 3. Ներքին (ինսայդերական) տեղեկությունների կազմը**

3.1. Ներքին (հնսայդերական) տեղեկություններ են համարվում հետևյալ տեղեկությունները.

ա) ֆինանսատնտեսական, հաշվապահական, արտադրական և այլ նշանակություն ունեցող տեղեկությունները, որոնք երրորդ անձանց հայտնի չլինելու պատճառով ունեն փաստացի կամ պոտենցիալ առևտրային արժեք և որոնց նկատմամբ մինչև այդ տեղեկությունների բացահայտման պահը ՀՀ օրենսդրությամբ, սույն կանոնակարգով և Ընկերության ներքին իրավական այլ ակտերով Ընկերության կողմից դրված սահմանափակումների հիմքով բացակայում են դրանց ազատ տիրապետելու հնարավորությունները: Այդ տեղեկություններն ընդգրկում են՝

- Ընկերության ֆինանսական հաշվետությունները ու հաշվապահական հաշվառման փաստաթղթերը,
- Ընկերության եկամուտների, շահույթի (վճասի) կանխատեսումները,
- անկախ գնահատողների հաշվետվությունները,
- Ընկերության ֆինանսական գործունեության արդյունքների, այդ թվում՝ Ընկերության ակտիվների և պասիվների զգալի փոփոխությունների վերաբերյալ տեղեկությունները,
- Ընկերության առողջապահության փոփոխության մասին տեղեկությունները,
- Ընկերության նկատմամբ պետական վերահսկող մարմինների և մրցակից կազմակերպությունների գործողությունները,
- Ընկերության խոշոր բաժնետերերի կառուցվածքում էական փոփոխությունները,
- Ընկերության կառավարման մարմինների կառուցվածքում փոփոխությունները,
- դատական վեճերում Ընկերության մասնակցության վերաբերյալ տեղեկությունները,
- Ընկերության վերակազմակերպման մասին տեղեկությունները,
- Ընկերության կողմից կնքվող կամ լուծվող էական պայմանագրերը և այլ գործարքները,
- Ընկերության կողմից արժեթղթերի պլանավորված (լրացուցիչ) թողարկումների մասին տեղեկությունները,
- Ընկերության կողմից բաժնետոմսերի պլանավորվող հետզնումների կամ ձեռքբերումների մասին տեղեկությունները,
- Ընկերության տնօրենների խորհրդի կողմից առաջարկվող շահութաբաժինների չափի մասին տեղեկությունները,
- Ընկերության ֆինանսատնտեսական գործունեության բնագավառում էական իրադարձությունների մասին այլ տեղեկությունները:

- բ) Արժեթղթերի շուկան կարգավորող ԼՂՀ օրենսդրության, ֆոնդային բորսայի կանոնների (եթե արժեթղթերը ցուցակված են տվյալ ֆոնդային բորսայում) պահանջներով բացահայտման ենթակա տեղեկությունները (բացառությամբ սույն հոդվածի 1.1 կետում թվարկված տեղեկությունների) մինչև դրանց ԼՂՀ օրենսդրությամբ, ֆոնդային բորսայի կանոններով սույն կանոնակարգով և Ընկերության ներքին իրավական այլ ակտերով սահմանված կարգով իրապարակման պահը: Ընկերության գործունեության, Ընկերության կողմից թողարկված արժեթղթերի (բաժնետոմսերի) և դրանցով կատարվող գործարքների վերաբերյալ այլ տեղեկությունները, որոնք չեն հանդիսանում

հանրամատչելի և որոնց հրապարակումը կարող է ազդել Ընկերության կողմից թողարկված արժեթղթերի (բաժնետոմսերի) գների վրա:

- 3.2. Ներքին (ինսայդերական) տեղեկատվություն են համարվում ոչ միայն տեղի ունեցած, այլ նաև ապագայում տեղի ունեցող կամ կանխատեսվող իրադարձություններին վերաբերող սույն հոդվածի 1-ին կետում նշված տեղեկությունները:
- 3.3. Տեղեկությունները համարվում են հանրամատչելի, եթե այն տարածված է այնախի միջոցներով (եղանակներով), որոնք ապահովում են ցանկացած անձին այդ տեղեկությունների ստացման հնարավորությունը: Շշուկների տարածումը, նույնիսկ եթե դրանք արժանահավատ են և վերաբերության դեպքում կանգվածային լրատվամիջոցների կողմից, չեն հանդիսանում հանրամատչելի տեղեկություններ:

**Հոդված 4. Ներքին (ինսայդերական) տեղեկություններ տիրապետող անձի հիմնական պարտականությունները**

- 4.1. Ներքին (ինսայդերական) տեղեկությունների տիրապետող անձն իրավունք չունի:
  - ա) իր կամ երրորդ անձանց օգտին կատարել Ընկերության կողմից թողարկված արժեթղթերով (բաժնետոմսերով) գործադրներ կամ դրանց կնքման պատվեր տալ,
  - բ) այլ անձանց տրամադրել կամ երրորդ անձանց համար հասանելի դարձնել ներքին (ինսայդերական) տեղեկությունները կամ դրանց վրա հիմնված այլ տեղեկություններ, բացառությամբ ԼՂՀ օրնսդրությամբ և Ընկերության ներքին իրավական ակտերով նախատեսված դեպքերի,
  - գ) ներքին (ինսայդերական) տեղեկությունների հիման վրա Ընկերության կողմից թողարկված արժեթղթերով (բաժնետոմսերով) գործադրներ կատարելու կամ չկատարելու վերաբերյալ այլ անձանց տրամադրել խորհրդատվություն:
- Ընկերության կողմից ինսայդերների հետ կնքված պայմանագրերը պետք է պարունակեն սույն հոդվածով նախատեսված պարտականությունները:
- 4.2. Ընկերության կողմից ինսայդեր համարվող իրավաբանական անձանց հետ կնքված պայմանագրերը պետք է պարունակեն պայմաններ նշված անձանց կողմից հետևյալ պարտականությունների մասին՝
  - ա) Ընկերությանը ներկայացնել ներքին (ինսայդերական) տեղեկություններին հասանելիություն ստացած անձանց ցուցակը, ինչպես նաև դրանում փոփոխություններն ու լրացումները,
  - բ) Ընկերությանը ներկայացնել հաստատում այն փաստի մասին, որ իր կողմից ներկայացված ցուցակում ընդգրկված անձինք ստանձնել են սույն հոդվածով նախատեսված պարտականությունները:
- 4.3. Ինսայդերները պատավոր են Ընկերությանը բացահայտել իրենց պատկանող՝ Ընկերության կողմից թողարկված արժեթղթերի (բաժնետոմսերի) մասին՝ հետևյալ կարգով՝
  - ա) տնօրենների խորհրդի անդամները, գործադիր մարմնում ընդգրկված անձինք, վերստուգող հանձնաժողովի անդամներն ընտվելու (նշանակվելու) պահից 7 աշխատանքային օրվա ընթացքում համապատասխան մարմնին ներկայացնում են գրավոր ծանուցում,

- բ) Ընկերության համար աշխատանքային կամ մասնագիտական պարտականություն կատարելու, այդ թվում՝ կնքված քաղաքացիական պայմանագրի ուժով ներքին (հնսայդերական) տեղեկատվության օգտագործելու (տիրապետելու) իրավունք ունեցող անձինք, համապատասխան պայմանագրի կնքման պահից 7 աշխատանքային օրվա ընթացքում Ընկերության գլխավոր տնօրենին ներկայացնում են գրավոր ծանուցում,
- գ) Ընկերության առողջության նրա ընտրվելու պահից (համապատասխան պայմանագրի կնքման) պահից 7 աշխատանքային օրվա ընթացքում Ընկերության գլխավոր տնօրենին ներկայացնում է գրավոր ծանուցում,
- դ) ներդրումային ծառայություններ մատուցող անձը, Ընկերության անվանական արժեթղթերի սեփականատերերի ռեեստր վարող անձը համապատասխան ծառայությունների մատուցման պայմանագրի կնքման պահից 7 աշխատանքային օրվա ընթացքում Ընկերության գլխավոր տնօրենին ներկայացնում են գրավոր ծանուցում,
- ե) ինսայդեր իրավաբանական անձանց հանդեպ պաշտոնավարման կամ այլ կարգավիճակի ուժով ներքին (հնսայդերական) տեղեկություններն օգտագործելու (տիրապետելու) իրավունք ունեցող անձինք համապատասխան պայմանագրի կնքման պահից 7 աշխատանքային օրվա ընթացքում Ընկերության գլխավոր տնօրենին ներկայացնում են գրավոր ծանուցում:

4.4. Ընկերության կողմից սույն հոդվածի 2-րդ կետով ստացված տեղեկությունները բացահայտվում են տարեկան և եռամսյակային հաշվետվություններում:

**Հոդված 5. Ինսայդերների կողմից Ընկերության արժեթղթերով (բաժնետոմսերով) կատարված գործարքների մասին տեղեկությունների բացահայտումը**

5.1. Ինսայդերները պարտավոր են Ընկերությանը բացահայտել իրենց կողմից Ընկերության թողարկած արժեթղթերով (բաժնետոմսերով) կատարված գործարքների մասին տեղեկություններ:

Նշված պարտականությունը տարածվում է Ընկերութան կողմից թողարկված արժեթղթերով (բաժնետոմսերով) ցանկացած գործարքի վերաբերյալ, որի շրջանակում ինսայդերը հանդես է գալիս որպես կողմ, շահառու, միջնորդ կամ ներկայացուցիչ:

Նշված տեղեկությունները տրամադրվում են Ընկերությանը այդ գործարքի կատարման պահից 7 աշխատանքային օրվա ընթացքում:

Բացահայտվող տեղեկությունների կազմն ընգրկում է՝

- ա) գործարքի տեսակը,
- բ) գործարքի կատարման ամսաթիվը,
- գ) տեղեկություններ անձի (անձանց) մասին, որը (որոնք) հանդիսանում են գործարքի կողմ (կողմեր), շահառու (շահառուներ), միջնորդ կամ ներկայացուցիչ,
- դ) գործարքի գինը,
- ե) գործարքի առարկան (այդ թվում՝ քանակ, անվանական արժեք),
- զ) բորսայի անվանումը, եթե գործարքը կատարվել է բորսայական առևտուրի ընթացքում:

5.2. Ընկերության կողմից սույն հոդվածով ստացված տեղեկությունները բացահայտվում են տարեկան և եռամսյակային հաշվետվություններում:

**Հոդված 6. Ներքին (ինսայդերական) տեղեկությունների բացահայտման  
Ընկերության պարտականությունները**

- 6.1. Ընկերությունը պարտավոր է ԼՂՀ օրենսդրությամբ, Ընկերության կանոնադրությամբ և այլ ներքին իրավական ակտերով սահմանված դեպքերում, ծավալով, կարգով և ժամկետներում բացահայտել ներքին (ինսայդերական) տեղեկություններ:
- 6.2. Եթե ներքին (ինսայդերական) տեղեկությունների բացահայտումը կարող է էապես վճարել Ընկերության օրինական շահերը, ապա Ընկերության գլխավոր տնօրենը կարող է Ընկերության պատասխանատվությամբ հետաձգել ներքին (ինսայդերական) տեղեկությունների բացահայտումը, եթե այն չի հակասում ԼՂՀ օրենսդրության պահանջներին: Ընկերության գլխավոր տնօրենը պետք է ձեռնարկի անհրաժեշտ այնպիսի գործողություններ, որ ներքին (ինսայդերական) տեղեկությունների բացահայտման հետաձգումը չհանգեցնի հանրության ապակողմնորոշմանը և ապահովի ներքին (ինսայդերական) տեղեկությունների գաղտնիությունը:
- 6.3. Եթե Ընկերությունը (նրա անունից կամ հաշվին գործող անձը) տրամադրում է ներքին (ինսայդերական) տեղեկություններ երրորդ անձանց՝ ծառայությունների մատուցման (աշխատանքի, մասնագիտության, պաշտոնի) կամ այլ պարտականությունների կատարման կապակցությամբ, ապա Ընկերությունը պարտավոր է հրապարակայնորեն բացահայտել դրանք նույն չափով՝ երրորդ անձին տեղեկությունները տրամադրելու հետ միաժամանակ (եթե տեղեկությունները տրամադրվել են դիտավորյալ), կամ երրորդ անձին տեղեկությունների տրամադրումից անմիջապես հետո (եթե տեղեկությունները տրամադրվել են ոչ դիտավորյալ): Սույն պահանջը չի տարածվում այն դեպքերի վրա, երբ երրորդ անձը, որին տրամադրվել է ներքին (ինսայդերական) տեղեկությունը, կրում է ԼՂՀ օրենսդրությամբ, Ընկերության կանոնադրությամբ և ներքին իրավական ակտերով կամ Ընկերության հետ կնքված պայմանագրով նախատեսված՝ այդ տեղեկատվության գաղտնիությունը պահպանելու պարտականությունը:

**Հոդված 7. Ներքին (ինսայդերական) տեղեկությունների գաղտնիության  
պահպանման պարտականությունները**

- 7.1. Իրենց ծառայողական (այլ մասնագիտական) կարգավիճակի ուժով ներքին (ինսայդերական) տեղեկություններ տիրապետող անձինք պարտավոր են պահպանել իրենց հայտի դարձած ներքին (ինսայդերական) տեղեկությունների գաղտնիությունը: Ներքին (ինսայդերական) տեղեկությունների գաղտնիության պահպանության պահանջը տարածվում է նաև այն ինսայդերների նկատմամբ, որոնք դադարեցրել են իրենց պաշտոնական կամ մասնագիտական պարտականությունները մինչև այն պահը, երբ նրանց կողմից ստացված տեղեկությունները պարունակում են ներքին (ինսայդերական) տեղեկությունների հատկանիշներ:

Նշված անձիք իրավունք ունեն բացահայտել ներքին (ինսայդերական) տեղեկությունները բացառապես օրենսդրությամբ և նրանց հետ կնքված պայմանագրերով սահմանված դեպքերում և կարգով:

#### Հոդված 8. Ներքին (ինսայդերական) տեղեկությունների պաշտպանությանն ուղղված միջոցառումներ

- 8.1. Ընկերությունն իրավունք ունի կիրառել ներքին (ինսայդերական) տեղեկությունների պաշտպանության միջոցառումներ, որոնք ուղղված են ներքին (ինսայդերական) տեղեկությունների անօրինական օգտագործմանը: Նշված միջոցառումների կիրառումը նպատակառուղղված է՝
- ա) ինսայդերների (ներքին (ինսայդերական) տեղեկություններ տիրապետող անձանց) գործունեության նկատմամբ վերահսկողության ապահովմանը՝ նրանց կողմից ներքին (ինսայդերական) տեղեկությունների օգտագործման և տիրապետման նկատմամբ նախատեսված սահմանափակումների հիման վրա,
  - բ) ներքին (ինսայդերական) տեղեկությունների օգտագործման և տիրապետման կարգի պահպանությանը, այդ թվում նաև՝ ներքին (ինսայդերական) տեղեկությունների անբարեխիղձ օգտագործման բացառմանը,
  - գ) Ընկերության նկատմամբ ներդրողների և գործընկերների վատահության բարձրացմանը:
- 8.2. Ընկերության կողմից կիրառվող ներքին (ինսայդերական) տեղեկությունների պահպանության ուղղված միջոցառումներից են հանդիսանում՝
- ա) Ընկերության որոշակի ստորաբաժանումների համար անձագրային ռեժիմի սահմանում (այդ թվում նաև ոչ աշխատանքային օրերի համար),
  - բ) ներքին (ինսայդերական) տեղեկություններ տիրապետող անձանց հաշվառում,
  - գ) ներքին (ինսայդերական) տեղեկություններ պարունակող թղթային կրիչների վրա կատարել «Գաղտնի» կամ «Խիստ գաղտնի» նշագրում: «Գաղտնի» կամ «Խիստ գաղտնի» նշագրված փաստաթղթերը կարող են տրամադրվել միայն ներքին (ինսայդերական) տեղեկություններ օգտագործելու (տիրապետելու) իրավունք ունեցող անձանց,
  - դ) աշխատանքային պայմանագրերի հիման վրա Ընկերության աշխատակիցներին կամ քաղաքացիական պայմանագրերի հիման վրա Ընկերության գործընկերներին ներքին (ինսայդերական) տեղեկություններ օգտագործելու (տիրապետելու) իրավունքի տրամադրում կամ սահմանափակում,
  - է) Ընկերության աշխատակիցներից և գործընկերներից ներքին (ինսայդերական) և այլ ծառայողական տեղեկությունների չբացահայտման վերաբերյալ գրավոր պարտավորագրերի ստացում,
  - թ) ներքին (ինսայդերական) և այլ ծառայողական տեղեկությունների մուտքի իրավասության տրամադրում միայն որոշակի վայրերում,
  - զ) ներքին (ինսայդերական) տեղեկություններ պարունակող և պահպանան ոչ ենթակա բոլոր փաստաթղթերի ժամանակին ոչնչացում,
  - է) փաստաթղթերի պահպանման վայրերի և աշխատատեղերի պաշտպանության ընթացակարգերի ներդրում և պահպանում,

- թ) տեխնիկական տեղեկատվական համակարգերի պաշտպանության համակարգերի օգտագործում՝ սահմանափակելով տեղեկատվության կորուստը և անօրինական, այդ թվում՝ կապի միջոցներով տեղեկատվություններին մուտքի հնարավորությունները,
- ժ) այլ միջոցառումներ, որոնք ուղղված են ներքին (ինսայդերական) տեղեկություններին հասանելիության սահմանափակմանը:
- 8.3. Ընկերության գլխավոր տնօրենը կամ նրա կողմից լիազորված աշխատակցը պարտավոր է վարել այն անձանց ցուցակը, որոնք իրենց պարտականություններն իրականացնելիս կամ այլ հիմքերով առնչվում են ներքին (ինսայդերական) տեղեկությունների հետ (այսուհետ՝ «ինսայդերների ցուցակ»): Ինսայդերների ցուցակում պետք է հստակորեն սահմանազատվեն ներքին (ինսայդերական) տեղեկություններին մշտապես հասանելիություն ունեցող և այդ տեղեկությունների հետ առնչվող այլ անձինք:
- 8.4. Ինսայդերների ցուցակի վարման միջոցով Ընկերությունը կարող է ստուգել և վերահսկել ներքին (ինսայդերական) տեղեկությունների շարժը՝ ըստ այդ տեղեկությունների առանձին մասերի:
- 8.5. Ընկերության գլխավոր տնօրենը կամ նրա կողմից լիազորված աշխատակցը պարտավոր է պարբերաբար նորացնել ինսայդերների ցուցակը և ապահովել տվյալ պահին ներքին (ինսայդերական) տեղեկությունների տիրապետող անձանց ընդգրկումը ցուցակում:
- 8.6. Ներքին (ինսայդերական) տեղեկությունների պահպանման նպատակով Ընկերությունը պարտավոր է.
- ա) աշխատակցի ստորագրությամբ նրան տեղեկացնել, որ իրեն ներքին (ինսայդերական) տեղեկություններին հասանելիությունն անհրաժեշտ է իր աշխատանքային պարտականությունների կատարման համար,
- բ) աշխատակցի ստորագրությամբ ծանոթացնել նրա կողմից ներքին (ինսայդերական) տեղեկությունների օգտագործման նկատմամբ Ընկերության կողմից սահմանված պայմաններին և դրանց խախտման հիմքով նրա նկատմամբ կիրառվող պատասխանատվության միջոցառումներին,
- գ) աշխատակցի համար ստեղծել անհրաժեշտ պայմաններ ներքին (ինսայդերական) տեղեկությունների օգտագործման պայմանները պահպանելու համար,
- դ) իրականացնել ներքին (ինսայդերական) տեղեկությունների օգտագործման կարգի պահպանման ուղղված այլ գործողություններ:

#### Հոդված 9. Ներքին (ինսայդերական) տեղեկությունների օգտագործման կարգը

- 9.1. Ներքին (ինսայդերական) տեղեկությունների օգտագործումն օրինական է համարվում այն դեպքերում, երբ դրանք օգտագործվում են ի շահ Ընկերությանը՝ ապահովելով Ընկերության արտադրատնտեսական, ֆինանսական և այլ գործունեության համապատասխանությունը ԼՂՀ գործող օրենսդրությանը, Ընկերության կանոնադրությանը, Ընկերության կողմից ընդունված ներքին իրավական ակտերին և այլ փաստաթղթերին (իրաման, որոշում, իրահանգ և այլն), ինչպես նաև Ընկերության հետ կնքված պայմանագրերի դրույթներին:
- 9.2. Ներքին (ինսայդերական) տեղեկությունների անօրինական օգտագործում է համարվում դրանց ցանկացած օգտագործումը, որն ուղեկցվում է սույն

հոդվածի 1-ին կետում նշված պահանջի խախտմամբ, այդ թվում՝ ներքին (ինսայդերական) տեղեկությունների օգտագործումը ինսայդերների և/կամ երրորդ անձանց անձնական նպատակներով, մասնավորապես՝

- ա) արժեթղթերով գործարքներ կնքումը,
- բ) արժեթղթերի գնման, վաճառքի, պահպանման վերաբերյալ երրորդ անձանց խորհրդատվության տրամադրումը,
- գ) երրորդ անձանց ներքին (ինսայդերական) տեղեկությունների փոխանցումը,
- դ) այլ կերպ ներքին (ինսայդերական) տեղեկությունների հրապարակումը և տարածումը: